

ԿԱՐԾԻՔ

«Հայաստանի Հանրապետությունում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետությունում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի¹ վերաբերյալ նկատառումները ներկայացվում են ստորև.

1. Նախագծի 4-րդ՝ «Խնդիրներ և նպատակներ» վերտառությամբ բաժնի 13-րդ կետում թվարկվում են այն սկզբունքները, որոնց վրա հիմնվում է հայեցակարգը: Սակայն, Նախագծի այս կետում լիարժեք արտացոլված չեն միջազգային չափանիշներին ու փորձին համապատասխան մի շարք հիմնարար սկզբունքներ, ինչպիսիք են, օրինակ, երեխայի լավագույն շահի, երեխաների նկատմամբ խտրականության բացառման, ինչպես նաև այլընտրանքային խնամքի ծառայությունների շարունակական բարելավման սկզբունքները:

Այսպես, ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում *երեխայի լավագույն շահին*: Նմանատիպ պահանջ է ամրագրված նաև ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 2010 թվականի փետրվարի 24-ին ընդունված Երեխաների այլընտրանքային խնամքի մասին ուղեցույցում², որի 6-րդ սկզբունքի համաձայն՝ բոլոր որոշումները, նախաձեռնությունները և մոտեցումները պետք է հիմնվեն երեխայի լավագույն շահի և իրավունքների վրա: Միևնույն ժամանակ, Ուղեցույցի 7-րդ սկզբունքը նախատեսում է, որ երեխայի լավագույն շահը որոշելիս, ի թիվս այլ հանգամանքների, պետք է հաշվի առնել նաև երեխայի լավ լինելու, իր տեսակետը՝ իր տարիքին և հասունությանը համապատասխան արտահայտելու իրավունքը:

Ավելին, ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 14 Ընդհանուր մեկնաբանության (2013) 53-րդ կետի համաձայն՝ եթե որոշում կայացնելիս հաշվի չի առնվել երեխայի կարծիքը կամ պատշաճ ուշադրություն չի դարձվել այդ կարծիքին՝ երեխայի տարիքին և

¹ Այսուհետ՝ Նախագիծ

² Այսուհետ՝ Ուղեցույց

հասունությանը համապատասխան, ապա այդ որոշումը չի հարգում երեխայի՝ իր լավագույն շահի որոշման վրա ազդելու հնարավորությունը:

Բացի այդ, Ուղեցույցի 10-րդ կետում նշվում է, որ երեխաների խնամքի կազմակերպման ոլորտում անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ վերացնելու երեխայի կամ նրա ծնողների նկատմամբ խտրականությունը՝ կախված որոշակի հանգամանքներից, այդ թվում՝ աղքատությունից, էթնիկ պատկանելիությունից, կրոնից, սեռից, մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամության առկայությունից, ՄԻԱՎ/ՁԻԱՀ կամ այլ հիվանդություններ ունենալուց, ընտանեկան կարգավիճակից և այլ հանգամանքներից, որոնք կարող են հանգեցնել երեխայից հրաժարվելուն և (կամ) նրան լքելուն:

Խտրականության բացառման սկզբունքն ամրագրված է նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «Խնամքի հաստատություններում ապրող երեխաների իրավունքների մասին» թիվ Rec(2005)5 հանձնարարականի³ բացատրական զեկույցի⁴ 5-րդ սկզբունքում:

Ավելին, Ուղեցույցի 8-րդ սկզբունքով ամրագրված է, որ պետությունը պետք է հատուկ ուշադրություն դարձնի արդեն ներդրված այլընտրանքային խնամքի պայմանների բարելավմանը՝ արտացոլելով Ուղեցույցում ներառված սկզբունքները:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծում ներառել նաև երեխայի լավագույն շահի, այլընտրանքային խնամքի ծառայությունների շարունակական բարելավման, խտրականության բացառման (այդ թվում՝ խոցելի խմբերի երեխաների ու նրանց ծնողների նկատմամբ) սկզբունքները:

2. Նախագծի «Ներածություն» վերտառությամբ բաժնի 5-րդ կետում նշվում է, որ երեխաների իրավունքների պաշտպանության հիմքում պետք է ընկած լինի ընտանիքում երեխայի ապրելու ու դաստիարակվելու գաղափարը: Միևնույն ժամանակ, նշվում է, որ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի ու պաշտպանության առավել արդյունավետ ձևը փոխարինող ընտանիքն է:

Հարկ է նշել, սակայն, որ միջազգային չափանիշներով երեխայի խնամքի հարցը որոշելիս պետք է նախապատվություն տրվի երեխայի՝ իր կենսաբանական ընտանիքում ապրելու իրավունքին: Այս առումով Ուղեցույցի 15-րդ կետը սահմանում է, որ միայն աղքատությունը կամ աղքատության հետ ուղղակի (անուղղակի) կապված այլ պայմանները չեն արդարացնում երեխային ծնողական խնամքից այլընտրանքային խնամքի տեղափոխելը կամ ընտանիքի վերամիավորումն արգելելը, այլ վկայում են տվյալ ընտանիքին համապատասխան աջակցություն տրամադրելու անհրաժեշտության մասին:

³ Այսուհետ՝ Հանձնարարական

⁴ Այսուհետ՝ Զեկույց

Նմանատիպ պահանջ է ամրագրված նաև Հանձնարարականում, իսկ Ձեկույցի 3-րդ սկզբունքով սահմանվում է, որ աղքատությունն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ երեխայի նկատմամբ այլընտրանքային խնամքի նշանակման համար:

Միաժամանակ, երեխային ընտանեկան խնամքից տեղափոխելը պետք է դիտվի որպես ծայրահեղ միջոց, և հնարավորության սահմաններում պետք է լինի ժամանակավոր և կարճատև⁵:

Ուստի, առաջարկում ենք Նախագծով սահմանել, որ երեխային ընտանեկան խնամքից զրկելը պետք է բխի երեխայի լավագույն շահից և պայմանավորված չլինի բացառապես վերջինիս ընտանիքի ֆինանսական անբավարար վիճակով:

3. Նախագծի «Խնդիրներ և նպատակներ» վերտառությամբ բաժնի 14-րդ կետով սահմանվում են ՀՀ-ում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների այլընտրանքային խնամքի համակարգի ներդրմանն ուղղված քաղաքականության հիմնական ուղղությունները: Սակայն, Նախագծով նախատեսված այս ուղղություններն ամբողջությամբ չեն արտացոլում այլընտրանքային խնամքի կազմակերպման միջազգային սկզբունքները, որոնք բխում են երեխայի լավագույն շահից:

Այսպես, Ուղեցույցի 11-րդ կետի համաձայն՝ այլընտրանքային խնամքի կազմակերպման հարցում սկզբունքորեն ցանկալի է, որ երեխան հնարավորինս մոտ ապրի իր մշտական բնակության վայրին՝ այդ կերպ առավել դյուրին դարձնելով իր ընտանիքի հետ կապը և հնարավոր վերամիավորումը՝ միաժամանակ նվազագույնի հասցնելով երեխայի կրթական, մշակութային և սոցիալական կյանքի ընդհատումը:

Ինչպես նաև, առանձնահատուկ ուշադրություն է պետք դարձնել քույրերի և եղբայրների հարցին: Մասնավորապես, Ուղեցույցի 17-րդ կետի համաձայն՝ միմյանց հետ կապ պահպանող քույրերն ու եղբայրները չպետք է բաժանվեն այլընտրանքային խնամքի կամակերպման դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է երեխայի իրավունքների չարաշահման իրական վտանգ կամ երեխայի լավագույն շահերից բխող այլ հիմնավոր պատճառ: Ամեն պարագայում, պետք է ջանքերը գործադրել հնարավորություն ընձեռելու եղբայրներին և քույրերին միմյանց հետ կապ պահպանելու, եթե դա չի հակասում նրանց ցանկություններին ու շահերին:

Առանձնահատուկ ուշադրություն է պետք դարձնել նաև փոքր՝ մինչև երեք տարեկան երեխաների համար այլընտրանքային խնամքի ապահովման հարցերին: Ուղեցույցի 22-րդ կետում նշվում է, որ հատկապես մինչև երեք տարեկան երեխաների խնամքը պետք է կազմակերպել ընտանիքահեն միջավայրում (family-based settings): Նշյալ սկզբունքից բացառություններ կարող են կիրառվել քույրերի և եղբայրների բաժանումը կանխելու

⁵ Ուղեցույց, կետ 14

նպատակով, ինչպես նաև, երբ երեխայի տեղավորումն այլ վայրում ելնում է արտակարգ բնույթ կրող իրավիճակից կամ կատարվում է նախապես սահմանված և շատ կարճ ժամկետով՝ նպատակ ունենալով վերամիավորել երեխային ընտանիքի հետ կամ այլ պատշաճ երկարաժամկետ խնամքի տարբերակ ապահովել:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների այլընտրանքային խնամքի համակարգի ներդրմանն ուղղված քաղաքականության հիմնական ուղղությունների մեջ ներառել նաև վերոշարադրյալ դրույթները:

«Վճարովի իրավունքների պաշտպանի աշխատակազմ